Հավելված 2
2023թ. «01» «26»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-5/23 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-5/23

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանումը՝	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական աջակցություն ցերեկային կենտրոնում. Ստեփանավան
Դրամաշնորհի N	N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-5/23
Դրամաշնորհատու կազմակերպություն	«Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն
Ծրագրի իրականացման ժամանակատված	01.01.2023 – 31.12.2023
Հաշվետու ժամանակահատված	01.01.2023 – 31.12.2023
Ներկայացման օր	17.01.2024
Հաշվետվության պատասխանատու	Գոհար Գևորգյան Գործառնական տնօրենի պարտականությունները կատարող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար

Միջոցառում 1. Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ:
Միջոցառում 2. Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում:
Միջոցառում 3. Սոցիալ-հոգեբանական վերականգմանն ուղղված ծառայությունների տրամադրում:
Միջոցառում 4. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում:
Միջոցառում 5. Հանրային միջոցառումներ և ԶԼՄ լուսաբանում:
Միջոցառում 6. Տուն այցերի /շարժական կամ մոբիլ ծառայություն /կազմակերպում հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար:
Միջոցառում 7. Ազատ ժամանցի և մշակույթային միջոցառումների կազմակերպում
Միջոցառում 8. Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:
Միջոցառում 9. Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:

Միջոցառում 10. Շահառուների 7-օրյա ամառային հանգիստ «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում

2.2 **Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Միջոցառում 1. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից կարիքների բազմակողմանի գնահատում՝ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ, որի արդյունքում իրականացվել է թվով **34** շահառուի կարիքների գնահատում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 2. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից կազմվել է թվով **34** սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 3. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով **34** շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 4. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտությունների զարգացնող խմբակներում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտթերապևտիկ տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 5.

- Մարտի 28-ին Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնում (Ստեփան Շահումյանի տուն-թանգարան) կայացավ քանդակագործ Սուսաննա Օհանյանի անհատական ցուցահանդեսի բացումը, որին ներկա էին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի շահառուները:
- Հունիսի 1-ին Ստեփանավան քաղաքի մշակույթի պալատի բակում տեղի ունեցավ տոնական միջոցառում, որին մասնակցեցին նաև կենտրոնի շահառուները, ինչպես նաև կազմակերպվեց նկարչության վարպետաց դաս:
- Հուլիսի 12-ին կենտրոնի թվով 26 շահառու ներկա գտնվեցին Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատի թատերական խմբի կողմից բեմադրված «Շեքսպիրյան աբսուրդ» ներկայացմանը:
- Հուլիսի 14-ին կենտրոնի թվով 20 շահառու մասնակցեցին Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատի բակում հայկական ազգային պարերի բաց պարուսուցմանը: Սովորեցին Թամզարա, Կարնո քոչարի, Էջմիածին և այլ պարեր:

- 06.12.2023թ.-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Ստեփանավանի քաղաքետարանի և Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատի համագործակցությամբ տեղի ունեցավ «Տարբեր ենք, բայց հավասար» խորագիրը կրող միջոցառում, որին մասնակցում էին կենտրոն հաճախող շահառուները:

Միջոցառում 6. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 6/ հաշվետու ժամանակահատվածում թվով **3** շահառու ծառայություն է ստացել նաև արտակենտրոն:

Միջոցառում 7.

- 06.02.2023 թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ն «Դեպի ներառական Հայաստան» ծրագրի շրջանակներում Երևանի թիվ 17 հատուկ դպրոցում կազմակերպեց «Սպորտ՝ բոլորի համար» միջոցառումը: Միջոցառման ընթացքում Լոռու մարզի հաշմանդամություն ունեցող թվով 17 անձ ծանոթացան բոչիա, անվասայլակով բասկետբոլ և կույր ֆուտբոլ ադապտիվ սպորտաձևերի հետ, այնուհետև մասնակցեցին ընկերական և մրցաշարային խաղերին: Գործողություն 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:
- 20.04.2023 թ-ին կենտրոնի շահառուները և նրանց ընտանիքի անդամները մասնակցեցին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի ճամբարում կազմակերպված «Զատիկ՝ ամենամեծ ու նվիրական տոնը» թեմայով միջոցառում և այնուհետև կազմակերպվեց ծառատունկ:
- 24-25.23.2023թ-ին Հայաստանի բոչիայի ազգային ասոցիացիայի նախաձեռնությամբ Քրոսս Առողջության Կենտրոնում կայացավ «Հայաստանի բոչիայի ազգային առաջնություն 2023»-ը, որին իրենց մասնակցությունը ունեցան նաև «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Լոռու թիմը, ով խմբային մրցաշարում զբաղեցրեց երրորդ հորիզոնականը:

Միջոցառում 8. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են հետևյալ սեմինարները և դասընթացները կենտրոն հաճախող շահառուների և նրանց ընտանիքի անդամների համար՝

- 22.03.2023թ-ին շահառու երեխաների ծնողները մասնակցեցին «Զարգացման տարբեր առանձնահատկություններ ունեցող երեխաների ոչ խոսքային հաղորդակցում» թեմայով սեմինարին: Սեմինարը վարեց կենտրոնի հոգեբան՝ Արփինե Հայրապետովան: Մասնակիցների թիվ՝ 10:
- 22.03.2023թ-ին շահառու երեխաների ծնողները մասնակցեցին «Խաղաթերապիա» թեմայով դասընթացին: Դասընթացը վարեց կենտրոնի արտթերապիստ՝ Անահիտ Վահրադյանը: Մասնակիցների թիվ՝ 10:
- 29.03.2023 թ-ին շահառու երեխաների ծնողները մասնակցեցին «Ապոհով համացանց» թեմայով սեմինարին: Սեմինարը վարեց կենտրոնի սոցիալական աշխատող՝ Ռոզա Մատինյանը: Մասնակիցների թիվ ՝12:
- 29.03.2023 թ-ին շահառու երեխաների ծնողները մասնակցեցին «Դրական ծնողավարում» թեմայով սեմինարին: Սեմինարը վարեց կենտրոնի հատուկ մանկավարժ՝ Աննա Զոբանյանը: Մասնակիցների թիվ՝ 12:
- 20.04.2023 շահառու երեխաների ծնողները մասնակցեցին Հոգեբան՝ Արփինե Հայրապետովայի կողմից կազմակերպված «Խմբային պարապմունքները, որպես

միջանձնային փախհարաբերությունների զարգացման միջոց երեխաների մոտ» թեմայով ուսուցողական-տեղեկատվական սեմինարին, որին ներկա էին 8 ծնող:

- 06.06.2023 կենտրոնի հատուկ մանկավարժ Աննա Չոբանյանը կազմակերպեց սեմինար «Ծնողավարման հմտություններ» թեմայով: Սեմինարին մասնակցեցին 10 ծնող:
- 28.06.2023 կինեզիոլոգ՝ Էրիկ Պեպանյանը կազմակերպեց սեմինար «Օստիոխոնդրոզ» թեմայով, որին մասնակցեցին 11 ծնող:
- 29.06.2023 լոգոպեդ Ռեգինա Բաբաջանյանը կազմակերպեց սեմինար, «Վիզուալ-ռիթմիկ շարք, շրջան, կիրառությունը լոգոպեդական աշխատանք» թեմայով: Սեմինարին մասնակցեցին 13 ծնող:
- 03.07.2023թ կենտրոնի կինեզիստ Էրիկ Պեպանյանը իրականացրեց «Վերականգնողական գույքի օգտագործումը տնային պայմաններում» թեմայով իրազեկման սեմինար: Մասակիցների թիվ 11:
- 28.09.2023թ կենտրոնի հոգեբան Արփինե Հայրապետովան կազմակերպեց սեմինար ծնողների համար «ԿԱՊԿՈՒ երեխաների մտածողության առանձնահատկություններն ու զարգացումը» թեմայով, որին մասնակցում էին 13 ծնող:
- 28.09.2023թ կենտրոնի արտթերապիստ Անահիտ Վահրադյանը իրականացրեց սեմինար «Արտթերապիան որպես ստեղծագործական որոնում» թեմայով, որին մասնակցում էին 14 ծնող:
- 28.09.2023թ կենտրոնի հատուկ մանկավարժ Աննա Չոբանյանը իրականացրեց սեմինար «Ծնողավարման հմտություններ» թեմայով, որին մասնակցում էին 11 ծնող:
- 01.12.2023թ-Սեմինարի թեման՝ «Անցանկալի վարքի կառավարում» վարող՝ Աննա Չոբանյան, մասնակիցների թիվը 16:
- 01.12.2023թ - Սեմինարի թեման՝ «Մանկական ուղեղային կաթված», վարող՝ Կինեզոթերապևտ Էրիկ Պեպանյան, մասնակիցների թիվը 11:
- 04.12.2023թ - Սեմինարի թեման՝ «Երեխայի լսողականն ուշադրությունը և հիշողությունը զարգացնող խաղ-մեթոդներ»Ж Վարող՝ Լոգոպեդ Հասմիկ Բաղդասարյան: մասնակիցների թիվը՝ 12:
- 04.12.2023թ - Սեմինարի թեման՝ «Խմբային պարապմունքներն՝ որպես միջանձնային փոխհարաբերությունների զարգացման միջոց», վարող՝ հոգեբան Արփինե Հայրապետովա: մասնակիցների թիվը՝ 13:

Միջոցառում 9. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 9/ հաշվետու ժամանակահատվածում թվով 68 քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առընչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման և այլ խնդիրներին վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 9-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 10. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 10/ կենտրոնի թվով **2** շահառուներ իրենց 7-օրյա ամառային հանգիստն են անցկացրել Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝

Ստորև ներկայացվում է Ստեփանավանի կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը https://www.facebook.com/groups/738413854220041

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար

- 23.01.2023-03.02.2023 ժամանակահատվածում կենտրոնի հոգեբան՝ Արփինե Հայրապետովան մասնակցել է Արդարադատության նախարարության ենթակայության տակ գտնվող «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմակերպած երկշաբաթյա դասընթացներին:
- Կենտրոնի հոգեբան՝ Արփինե Հայրապետովան հանդիսանալով Ստեփանավանի քաղաապետարանի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի անդամ՝ հանձնաժողովի անդամների հետ իրականացրել է տունայց Ստեփանավան քաղաքում:
- 10.03.2022 թ-ին կենտրոնի բազմամասնագիտական թիմը մասնակցել է Կարմիր Խաչի Հայաստանյան գրասենյակի կողմից անցկացված «Արտակարգ իրավիճակում առաջին օգնության կազմակերպման» 8 ժամյա տեսագործնական դասընթացին:
- «Սորս» հիմնադրամի նախաձեռնությամբ սկսվել են Ստեփանավանի կենտրոնում «Հատուկ գույքադարան»-ի բացման նախապատրաստական աշխատանքները, որի շրջանակներում կենտրոնի բազմամասնագիտական թիմը և ծնողական համայնքը մասնակցել են գույքադարանի աշխատանքները արդյունավետ կազմակերպման նպատակով կազմակերպված թվով 8 դասընթացներին:
- Սոցիալական աշխատող/համակարգող՝ Ռոզա Մատինյանը ապրիլի 10-16 մասնակցել է EU-LEAD4LORI and TAVUSH Regions- Ի կողմից կազմակերպված ճանաչողական շրջայցին, որի ժամանակ փորձի փոխանակման նպատակով եղավ Հատուկ կարիքներով երեխաների ցերեկային խնամքի կենտրոնում:
- 18.04.2023թ-ին կենտրոնի հոգեբանը մասնակցել է Ստեփանավանի համայնքապետարանում կազմակերպված «Հայաստանում գյուղական ձեռնարկատիրության առաջատար կանայք» WeLeRe ծրագրի շրջականում իրականացվող ընտանեկան բռնության կանխարգելմանը նվիրված սեմինարին:
- 04.04.2023 թ-ին Կենտրոնի հոդեբան Արփինե Հայրապետովան մասնակցել է Ստեփանավան համայնքի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի» հերթական նիստին:
- 05.05.2023 թ-ին կենտրոնի բազմամասնագիտական թիմը մասնակցել է «Սորս» հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպված «Հատուկ գույքադարան»-ի բացման միջոցառմանը ք. Վանաձորում՝ «Լոռու մարզի Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն»-ում:
- 03.05.2023 թ-ին Կենտրոնի հոգեբան Արփինե Հայրապետովան մասնակցել է Ստեփանավան համայնքի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի» հերթական նիստին:

- 16.05.2023 թ-ին կենտրոնի սոցիալական աշխատող Ռոզա Մատինյանը, հոգեբան Արփինե Հայրապետովան մասնակցեցին Ստեփանավանի ՄՍԾՏԿ-ի կողմից կազմակերպված կլոր սեղան քննարկմանը:
- 17-19.05.2023 թ-ին կենտրոնի սոցիալական աշխատող Ռոզա Մատինյանը մասնակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և ծառայությունների մատուցման առանձնահատկությունները. վերականգնողական օգնությունը և դրա տրամադրումը, տրամադրման կարգն ու պայմանները» վերապատրաստման դասընթացին:
- 22.09.2023թ.-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Ստեփանավանի բազմամասնագիտական թիմը մասնակցել է՝ «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի կողմից կազմակերպած «ՄԻԱՎ-ով ապրող և ԹՆՕ կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության դեմ հակազդում ՀՀ-ում» թեմայով սեմինարին:
- 29.09.2023թ կենտրոնի սոցիալական աշխատող՝ Ռոզա Մատինյանը մասնակցել է ՀՀ ԱՍՀՆ կողմից կազմակերպած «Regional Family Placement» խորագրով համաժողովին:
- 02.10.2023թ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի համակարգող Ռ.Մատինյանը և հոգեբան Ա.Հայրապետովան մասնակցել են Միասնական սոցիալական ծառայության Ստեփանավանի տարածքային կենտրոնի հերթական նիստին:
- 27.11.2023թ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի համակարգող Ռ.Մատինյանը Միասնական սոցիալական ծառայության Ստեփանավանի տարածքային կենտրոնի հերթական նիստին:
- 20.12.2023թ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի համակարգող Ռ.Մատինյանը մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության Ստեփանավանի տարածքային կենտրոնի հերթական նիստին:

Գործառնական տնօրենի պարտականությունները կատարող Գ.Գևորգյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ս.Մաղաքյան

Digitally signed by MAGHAKYAN SUREN 3312720087
Date: 2024.01.17 18:03:08 AMT